ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Հարցաշար

ԹԵՄԱ 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Շինարարական գործընթացներ, աշխատանքային ռեսուրսներ, նյութական տարրեր: Շինարարական գործընթացների տեխնիկական միջոցները, նորմատիվային և նախագծային փաստաթղթերը: Տեխնոլոգիական քարտեր:

ԹԵՄԱ 2. ՇԻՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

2.1. Երկրաբաշխական նշահարման հիմքի ստեղծում: Տարածքի մաքրում: Մակերևութային և գրունտային ջրերի հեռացում:

ԹԵՄԱ 3. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԲԵՌՆԵՐ

3.1. Շին. բեռների փոխադրում: Շին. բեռների բեռնում-բեռնաթափում: Շին. բեռների պահեստավորում:

ԹԵՄԱ 4. ԲՆԱՀՈՂԻ ՄՇԱԿՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

4.1. Ընդհանուր դրույթներ, բնահողերը և նրանց շինարարական հատկությունները: Նախապատրաստական և օժանդակ պրոցեսներ, հողային կառույցի նշահարումը, տեղանքի նախապատրաստումը:

4.2. Ջրահեռացում և ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցում, հանույթի պատերի ժամանակավոր ամրացում, բնահողերի արհեստական ամրացում:

4.3. Բնահողային զանգվածների ծավալները հաշվելու մեթոդները:

4.4. Բնահողի մշակման մեքենայական եղանակները: Բնահողի մշակումը հորատմամբ, բնահողի մշակումը պայթեցմամբ: Բնահողի մշակումը ձմեռային պայմաններում:

ԹԵՄԱ 5.ՑՑԱՅԻՆ ՀԻՄՔԵՐ

5.1. Ընդհանուր դրույթներ: Հիմնական գործընթացների նկարագիրը և աշխատանքների ընդունումը: Նյութերի և աշխատանքային ճակատի նախապատրաստումը ցցահարման համար:

5.2. Լցովի ցցային աշխատանքների հիմնական գործողությունները: Ցցային աշխատանքներում օգտագործվող մեքենաներն ու մեխանիզմները:

5.3. Ցցային աշխատանքների կատարման և որակի ստուգումը, երկարակեցության ապահովումը: Լցովի ցցերի կիրառումը թույլ բնահողերում: Անվտանգության տեխնիկայի կանոնները:

ԹԵՄԱ 6. ՄԻԱՁՈՒՅԼ ԲԵՏՈՆԻ ԵՎ ԵՐԿԱԹԲԵՏՈՆԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ

6.1. Կաղապարամածային աշխատանքներ: Կաղապարամածի տեսակները և նրանց ներկայացվող պահանջները: Չոր և շոգ եղանակին կաղապարամածի տեսակի ընտրման առանձնահատկությունները:

6.2. Կոնստրուկցիաների ամրանավորումը: Ամրանային պողպատների դասակարգումը: Ամրանային շինվածքներ:

6.3. Բետոնախառնուրդի հատկությունները և պատրաստումը: Բետոնախառնուրդի փոխադրումը: Բետոնախառնուրդի տեղադրումը:

6.4. Բետոնացման հատուկ եղանակներ: Բետոնի հասունացումը և կաղապարահանումը: Բետոնացման տեխնոլոգիան առանձնահատուկ պայմաններում:

ԹԵՄԱ 7. ՔԱՐԱՅԻՆ ՇԱՐՎԱԾՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

7.1. Քարե շարվածքի տարրերը, գործիքները, կատարման և ընդունման կանոնները: Շարվածքի տեսակները: Քարե կոնստրուկցիաների կառուցումը ձմեռային պայմաններում:

ԹԵՄԱ 8. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

8.1. Շինարարական կոնստրուկցիաների մոնտաժի ապահովման տեխնիկական միջոցները: Ե/Բ կմախքով արդյունաբերական շենքերի կոնստրուկցիաների մոնտաժումը: Ե/բ կոնստրուկցիաների տարրերի մոնտաժային միացումների իրականացման տեխնոլոգիան:

8.2. Մետաղական կոնստրուկցիաների մոնտաժ: Մետաղական կոնստրուկցիաների տարրերի մոնտաժային կցումների իրականացման տեխնոլոգիան: Շին. կոնստրուկցիաների մոնտաժման տեխնոլոգիան ծայրահեղ կլիմայական պայմաններում:

8.3. Փայտե և պլաստմասսե կոնստրուկցիաների պատրաստումը և մոնտաժումը: Անտառանյութերը և դրանց տեսականին: Շինարարական նրբատախտակ: Ապակեպլաստիկատներ: Օրգանական ապակի և վինպլաստ: Շենքերի և շինությունների կոնստրուկտիվ տարրերը: Ճակատային վանդակամած:

8.4. Պատերի և ծածկերի եռաշերտ (փակ) պանելներ: Հեծաններ և հենագերաններ: Փայտե կոնստրուկցիաների պատրաստումը և մոնտաժումը: Որակի հսկումը:

ԹԵՄԱ 9. ՊԱՇՏՊԱՆԻՉ ԾԱԾԿՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

9.1. Տանիքների իրականացում: Ձրա և ջերմամեկուսացման աշխատանքներ: Պաշտպանիչ ծածկույթների իրականացումը ձմեռային պայմաններում:

<u>Գործնական աշխատանքներ</u>

1. Հողային աշխատանքների ժամանակ սև նշագծերի որոշումը: Միջին նշագծի որոշումը:
2. Կարմիր նշագծերի որոշումը: Աշխատանքային նշագծերի որոշումը:
3. Ձրոյական աշխատանքային գծի դիրքի որոշումը: Ծավալների որոշումը շին. հրապարակի հարթեցման աշխատանքներում:
4. Շեպերի գումարային ծավալների որոշումը: Բնահողի տեղափոխման միջին հեռավորության որոշումը:
5. Խրամատների և փոսորակների իրականացման ժամանակ բնահողի ծավալի որոշումը: Բնահողային ջրերի իջեցման ասեղնաֆիլտրերի քանակի որոշումը:
6. Տարածական ծավալների որոշումը: Հողային զանգվածի բալանս և զրոյական բալանս:
7. Մեքենաների շահագործման արտադրողականության քանակի և աշխատանքի տևողության հաշվարկ: Պայթուցիկ նյութերի կշռի, լիցքերի քանակի և փոսորակից արտանետած բնահողի ծավալի որոշումը: